ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 878-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 706-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» N 706-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածի 1-ին, 2-րդ և 9-րդ կետերում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով.

2) N 2 հավելվածի՝

ա. 2-րդ կետում «ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով,

բ. 3-րդ կետում «ՀՀ պետական եկամուտների կոմիտե» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով,

գ. 5-րդ կետում «ՀՀ քաղաքաշինության կոմիտե» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով.

3) N 4 հավելվածի՝

ա. 1-ին կետում «Քրեակատարողական ծառայություն» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով,

բ. 2-րդ կետում «Զբոսաշրջության կոմիտե» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով,

գ. 3-րդ կետում «Էկոպարեկային ծառայություն» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով,

դ. 5-րդ կետում «Միասնական սոցիալական ծառայություն» տողում «այդ թվում՝ առաջին տեղակալ» սյունակում «1» թիվը փոխարինել «-» նշանով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 4-ին, բացառությամբ 1-ին կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 15-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ